

**«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան ծրագրի
Շահառուների Խորհրդի**

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հաստատվել է «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան ծրագրի
Շահառուների Խորհրդի 2006 թվականի օգոստոսի 22-ի նիստում

ա) Շահառուների խորհրդի առաքելությունը

Շահառուների խորհրդի առաքելությունը ծրագրի առավել արդյունավետ իրականացումն է, ծրագրի շահառուների շահերի ուղղակի և անուղղակի պաշտպանությունը:

բ) Շահառուների խորհրդի կանոնակարգը

1. Սույն կանոնակարգը սահմանում է «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան ծրագրի 2006թ. մայիսի 31-ին ձևավորված Շահառուների Խորհրդի աշխատանքների կազմակերպման ու իրականացման կարգը:
2. Շահառուների Խորհրդի կանոնակարգը մշակվում, փոփոխվում, լրացվում ու հաստատվում է Շահառուների Խորհրդի կողմից՝ հիմնվելով Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև 2006թ. մարտի 17-ին կնքված Հազարամյակի մարտահրավեր համաձայնագրի (այսուհետ՝ համաձայնագիր) վրա:

գ) Շահառուների խորհուրդը

1. Շահառուների Խորհուրդը կազմված է Ծրագրի տարբեր շահառուների խմբերի ներկայացուցիչներից: Այն, համաձայնագրի պահանջներն ապահովելու համար ծրագրի իրականացման բոլոր փուլերում իրականացնում է հասարակական մոնիտորինգ՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ սերտ կապեր ստեղծելու, անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելու եւ նրանցից խորհուրդներ ու առաջարկություններ ստանալու միջոցով:
2. Շահառուների Խորհուրդը կազմված է տարբեր ոլորտները ներկայացնող քաղաքացիական հասարակության 15 ներկայացուցիչներից:
3. Շահառուների Խորհրդի բոլոր անդամները ունեն հավասար ձայների իրավունք քվեարկության և հարցերի քննարկման ժամանակ: Յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք (կողմ, դեմ, ձեռնպահ):
4. Շահառուների Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի, հատուկ հանձնաժողովների կազմման և գործարկման, արտագնա ուսումնասիրությունների և իր առաքելությունն իրականացնելու համար անհրաժեշտ այլ ձևերով:
5. Շահառուների խորհրդի նիստերը գումարվում են եռամսյակն առնվազն մեկ անգամ, ինչպես նաև՝ ըստ անհրաժեշտության: Շահառուների խորհրդի արտահերթ նիստ կարող է գումարվել Շահառուների խորհրդի երկու անդամների կամ «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրենի կամ Կառավարման խորհրդի նախագահի պահանջով: Շահառուների խորհրդի քարտուղարը պետք է

Շահառուների խորհրդի բոլոր անդամներին տրամադրի ծանուցում, որի մեջ նշված կլինի Շահառուների խորհրդի նիստի վայրը, ամսաթիվը, ժամը և օրակարգը: Հերթական եռամսյակային նիստի դեպքում ծանուցումը պետք է տրամադրվի նիստի գումարման ամսաթվից առնվազն յոթ օր առաջ, իսկ արտահերթ նիստի դեպքում՝ էլեկտրոնային փոստով, արտահերթ նիստի գումարման ամսաթվից առնվազն 48 ժամ առաջ, իսկ բանավոր ծանուցման դեպքում՝ տվյալ արտահերթ նիստի գումարման ամսաթվից առնվազն 24 ժամ առաջ:

6. Շահառուների խորհրդի նիստը վարում է նախագահողը, որն ընտրվում է յուրաքանչյուր նիստի սկզբում: Նիստերն արձանագրում և նիստերի միջև ընկած ժամանակահատվածում Շահառուների Խորհրդի աշխատանքները համակարգում է քարտուղարը: Քարտուղարի գործառույթներն իրականացնում է Շահառուների խորհրդի օգնականը: Նիստի արձանագրությունը ստորագրում են նիստի նախագահողը և քարտուղարը:
7. Շահառուների խորհրդի նիստերը իրավագոր են, եթե նիստին ներկա են Խորհրդի անդամների առնվազն 2/3-ը, ներառյալ անդամների լիազոր ներկայացուցիչները (փոխարինողները):
8. Շահառուների խորհրդում քննարկվող հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են նիստի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Շահառուների խորհրդի անդամները կարող են ներկայացնել հատուկ կարծիք՝ ներկայացնելով այն արձանագրությանը կից:
9. Շահառուների Խորհրդի նիստերի բոլոր արձանագրությունները 3 օրվա ընթացքում ուղարկվում են Շահառուների խորհրդի անդամներին և դրանից հետո 5 օրվա ընթացքում հրապարակվում են ՀՄՀ-Հայաստան ծրագրի վեբ-կայքում:
10. Շահառուների Խորհրդի նիստերը բաց են, հրապարակային, հաշվետու հանրությանը և մատչելի: Շահառուների Խորհրդի նիստերում պահպանվում է քննարկվող հարցերի և տեղեկատվության գաղտնիությունը՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Առանձին դեպքում Շահառուների խորհրդի նիստին մասնակից անդամների 2/3-ի որոշմամբ նիստը տեղի է ունենում միայն Շահառուների խորհրդի անդամների մասնակցությամբ: Միայն Շահառուների խորհրդի անդամների մասնակցությամբ տեղի ունեցող նիստն արձանագրում է Շահառուների խորհրդի ներկա անդամներից մեկը:
11. Շահառուների խորհուրդն իրավունք ունի յուրաքանչյուր եռամսյակային նիստի ընթացքում ծրագրի կառավարման գրասենյակից ստանալ Ծրագրի նպատակների եւ իրագործման ընթացքի վերաբերյալ տեղեկություններ, մոնիտորինգի եւ գնահատման պլանի, իրագործման պլանի նախագծերի տարբերակները, ինչպես նաև Կառավարման հանձնաժողովին ներկայացվող հաշվետվությունների օրինակներ:

դ) Շահառուների խորհրդի անդամների իրավունքներն ու պարտականությունները

1. Շահառուների խորհրդի անդամները ընտրվում են սահմանված կարգով ընտրելու իրավունք ստացած Հասարակական կազմակերպությունների, ոչ պետական հիմնադրամների, միությունների, ոչ առետրային, ոչ պետական այլ կազմակերպությունների կողմից: Շահառուների խորհրդի անդամները վերընտրվելու իրավունք ունեն:

2. Շահառուների Խորհրդի անդամը իրավունք ունի կատարելու առաջարկություններ, քննարկման ներկայացնելու օրակարգային հարցեր, լինել հանձնախմբերի անդամ:
3. Եթե Շահառուների խորհրդի որևէ անդամ կամ նրա կողմից ներկայացված փոխարինողները չեն մասնակցում Շահառուների խորհրդի երկու հաջորդական նիստերի, ապա Շահառուների խորհրդի որոշման համաձայն դուրս են մնում Շահառուների խորհրդի կազմից: Նիստերին հանախմբան արդյունքները ամփոփվում են քարտուղարի կողմից և ներկայացվում Շահառուների խորհրդին:
4. Շահառուների խորհրդի անդամի լիազորությունների դադարելու դեպքում այն լրացվում է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների՝ այս ծրագրի մասնակցության համար անցկացված վերջին ընտրությունների արդյունքներով առավել քվեներ ստացած կազմակերպություն-անձանցով:
5. Շահառուների խորհրդի յուրաքանչյուր անդամ իրավասու է ներկայացնելու 1-2 փոխարինողի, որոնք նախօրոք պետք է հաստատվեն այլ անդամների ձայների մեծամասնությամբ: ՇԽ անդամին՝ նիստին մասնակցելու անհնարինության դեպքում փոխարինում է նրա փոխարինողներից մեկը: ՇԽ անդամի գրավոր լիազորությամբ ՇԽ նիստում նրան կարող է փոխարինել նրա լիազորած անձը:
6. Շահառուների խորհուրդը սահմանում է ծրագրի Կառավարման խորհուրդ պատվիրակված անձանց հաշվետվության մեխանիզմը: Կառավարման Խորհուրդ պատվիրակված ներկայացուցիչները յուրաքանչյուր եռամսյակը առնվազն մեկ անգամ, սահմանված կարգով ներկայացնում են հաշվետվություն Շահառուների խորհրդին:
7. Շահառուների խորհրդի անդամը պարտավոր է բացահայտել հարցերի քննարկման ժամանակ շահերի բախման հնարավոր բոլոր դեպքերը:

ե) Շահառուների խորհրդի անդամի լիազորությունների դադարումը

1. Շահառուների Խորհրդի անդամի լիազորությունները դադարում են՝
 - ա) ՀՄՀ ծրագրի եւ Շահառուների Խորհրդի անդամների կամ նրանց ներկայացնող կազմակերպությունների միջև շահերի բախման դեպքում:
 - բ) Շահառուների Խորհուրդի անդամի դիմումի համաձայն կամ հրաժարականի դեպքում:
 - գ) Շահառուների խորհրդի անդամի լիազորությունները դադարելու դեպքում դադարում են նաև այդ անդամի լիազորությունները Կառավարման խորհրդում:
 - դ) Այլ հարգելի պատճառներով:

զ) ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհրդի կողմից Կառավարման խորհուրդ պատվիրակված քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները

1. ՀՄՀ-Հայաստան ծրագրի Կառավարման Խորհրդի քաղաքացիական հասարակության 5 ներկայացուցիչների ընտրությունը կատարում է Շահառուների Խորհուրդն իր անդամների կազմից՝ փակ-գաղտնի քվեարարությամբ: Կառավարման Խորհուրդ քաղաքացիական հասարակության անդամների պատվիրակումը կատարվում է 1 տարի ժամկետով:

2. Կառավարման Խորհրդում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ժամկետը լրանալուց հետո կամ որևէ ներկայացուցչի լիազորությունները դադարելու դեպքում, այս կանոնակարգի **գ-1** հոդվածում սահմանված կարգով կատարվում է Կառավարման Խորհրդում քաղաքացիական հասարակության նոր ներկայացուցիչների ընտրություն:
3. Կառավարման Խորհուրդ պատվիրակված ներկայացուցիչները շարունակում են մնալ Շահառուների Խորհրդում՝ որպես անդամներ:
4. Քաղաքացիական հասարակությունից Կառավարման Խորհուրդ պատվիրակված ներկայացուցիչի լիազորությունները դադարում են Շահառուների Խորհրդի կազմի ձայների 2/3-ի որոշմամբ, երբ Կառավարման Խորհուրդ պատվիրակված ներկայացուցիչը չի կատարում իրեն վերաբերվող Շահառուների որոշումը: